Համազասպ Աբրահամյան
Հայաստանի պատմության թանգարան
habrahamyan679@gmail.com

ԴՎԻՆՈՒՄ ԽԵՑԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր. Դվին, խեցեգործություն, արտադրական գործընթաց, հնոց, դուրգ, եռոտանի

Հայաստանի միջնադարյան կենսընթացի տարբեր փուլերում տնտեսական, քաղաքական և հոգևոր կենտրոն հանդիսացող Դվինի ավելի քան 130–ամյա հնագիտական ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել, վավերացվել և հրատարակվել են քաղաքի տնտեսությանը վերաբերող կառույցներ, հարմարանքներ և իրեր:

Քաղաքի տնտեսության հիմնական ճյուղերից մեկը հանդիսացել է խեցեգործությունը, որը ներկայանում է արհեստանոցների, թրծման հնոցների, տարատեսակ հարմարանքների և, իհարկե, մեծաքանակ ու բազմազան արտադրանքով: Տեխնիկական ընդարձակ զինանոցի օգտագործումը, խեցեղենի ձևաբանական և հարդարման բազմազանությունը վկայում են այդ արհեստի կարևորությունը քաղաքային մշակույթում:

Դվինի խեցեգործական արտադրության հարցը միշտ էլ եղել է մասնագետների ուշադրության կենտրոնում: Հայաստանի պատմության թանգարանում պահվող նյութերն ու առկա հետազոտությունները թույլ են տալիս ընդհանուր ուրվագծել մերձավորարևելյան այս խեցեգործական կենտրոնի արտադրական գործընթացի հիմնապատկերը:

Քաղաքի երկարամյա գոյության ընթացքում տեղի ունեցած բնական աղետներն ու ռազմական ավերածությունները, լքված քաղաքի տարածքում հետագա նոր բնակավայրերի առաջացումը, նոր ժամանակների տնտեսական գործունեությունը բավականին խաթարել են մշակութային շերտերի ամբողջականությունը: Այնուամենայնիվ հնագիտական աշխատանքների ընթացքում տարբեր չափերի և նշանակության բրուտանոցներ կամ խեցեղենի արտադրության հետ կապվող հնագիտական առարկաներ են գտնվել քաղաքի գրեթե բոլոր ուսումնասիրված հատվածներում:

Այս գտածոների թվին են պատկանում մաքուր կավահողի ամբարման համար նախատեսված հորերը, կավահողը մանրացնելու աղորիքները, ավազը, հունցած կավե գնդերը (կավե գնդերի օգտագործման մասին տե՛ս Birchler et al. 2016, 87): Բուն անոթների պատրաստման գործընթացը ներկայացվում է ձեռքի կամ ոտքի օգնությամբ պտտվող դուրգի անիվներով, հարդարման համար օգտագործվող քարե և ոսկրե սրածայր գործիքներով, չորացման ընթացքում մակերեսը հարթեցնող կոկիչ քարերով (նկ. 2(2,3), նկ. 3(4,5), (Առաքելյան 1958, 222; Ղաֆա-

դարյան 1982, 121; Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 23)։ Այս գործընթացի վկայություններն են նաև անգոբի չորացած կտորները, ջնարակի խարամը։

Տեխնոլոգիական հաջորդ՝ թրծման գործընթացն իրականցվել է մեծ և փոքր հնոցներում, որոնց ծավալներից էլ կախված է եղել արհեստանոցի չափը։

Դվինի գրեթե ողջ տարածքում առկա են խեցեգործական փոքր և մեծ արհեստանոցներ։ Համեմատաբար փոքր արհեստանոցները բացվել են հիմնականում միջնաբերդի և կենտրոնական թաղամասի հատվածներում։ Նմանատիպ արհեստանոցներից է 1950 թ. քաղաքի միջնաբերդի եզրային հատվածում բացված հնոցը, որի մեծ մասն ավերվել էր միջնաբերդի լանջի փլուզման հետևանքով։ Հնոցի պահպանված մասն ունի ուղիղ պատեր՝ պահպանված աղյուսների 12 շարք բարձրությամբ, և թվագրվում է 11–12-րդ դարերով (Ղաֆադարյան 1952, 236–237)։ Հետագայում բացվել են նաև այս արհեստանոցի մյուս հնոցները, մեկը՝ աղյուսաշար ու արևելք-արևմուտք ուղղվածությամբ, մյուսը՝ կավակերտ ու կլոր հատակագծով (Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 59)։ Սա միջնաբերդի վերին բերդի, որը զբաղեցնում է ամենաբարձր հատվածը, մինչ այժմ հայտնաբերված ամենաամբողջական խեցեգործական արհեստանոցն է։

Համեմատաբար ամբողջական տեսք ունի միջնաբերդի ստորին բերդում տեղակայված արհեստանոցներից մեկը։ Ընդհանուր առմամբ քաղաքի գոյության վերջին փուլում միջնաբերդի այս հատվածում ձևավորվել էր խիտ բնակեցված արհեստավորական թաղամաս, որտեղ առկա էին նաև բրուտի արհեստանոցներ (Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 59)։ Այս արհեստանոցներից մեկը հայտնաբերվել է 1976 թ.։ Կառույցն իրենից ներկայացնում է բազմաթիվ վերանորոգումներով պատերով, մի քանի շերտ հատակներով, երկու մասի բաժանված ուղղանկյուն շինություն (նկ. 1)։ Ունի չափերի 8,50×7,25 մ հարաբերակցություն։ Կառույցի մի հատվածում տեղավորված են տարբեր բարձրությունների թոնիրներ, իսկ դրանցից ոչ հեռու բրուտի հնոցն է։ Բուն հնոցը հակատագծում բոլորակ է և ավարտվել է գմբեթով։ Այն ունի 120 սմ տրամագիծ և աղյուսների 17 շարք պահպանված բարձրություն։ Հատակը նույնպես աղյուսաշար է։ Արևմտյան կողմում բացվում է կենտրոնական օդամուղ անցքը։ Հնոցի երկու կողմերում անցնում են աղյուսաշար երկու նեղ մղանցքները, որոնք ունեն 14 սմ լայնություն և միանում են կենտրոնական օդամուղին։ Հնոցը եղել է երկհարկ։ Ներքևի հատվածում վառվել է կրակը, իսկ վերևի հատվածում կախվել կամ շարվել են կանթավոր և անկանթ առարկաներ։ Նման հնոցների երկու հարկաբաժինները սովորաբար իրարից անջատված են լինում միջնորմով, կամ կավե գլանաձև ձողերով, որոնք, սակայն, տեղում չեն հայտնաբերվել։ Արհեստանոցի մյուս բնորոշ բաղադրիչը հնոցից հարավ գտնվող 1,5 մ երկարությամբ աղյուսաշար պատերով հորն է (լայնությունը արևմտյան մասում՝ 50 սմ, արևելյանում՝ 60 սմ)։ Սա նախատեսված է եղել արտադրության մեջ օգտագործվող նյութերից մեկի պատրաստման կամ պահեստավորման համար։ Եվս մեկ հոր՝ 75 սմ խորությամբ և 3 մ երկարությամբ, տեղակայված է արտադրամասի հարավարևմտյան հատվածում, որի մի մասը լցված է կավահողով, իսկ մյուս մասը՝ մոխրով։ Խեցեգործական արհեստանոցից հայտնաբերվել են նաև խեցեղենի բեկորներ, անգոբի կտորներ, թրծման գործընթացում օգտագործվող եռոտանի (նկ. 2 (1) և կա-

վե գլանաձև ձողի բեկոր (նկ. 3(3), 12–13-րդ դդ. թվագրվող բազմաթիվ խեցեղեն առարկաներ, համաժամանակյա պղնձե դրամներ, խիստ քայքայված երկաթե տարբեր առարկաներ և այլն (Բաբայան 1979, 276–280): Բրուտի այս արհեստանոցը Դվինի գրեթե ամբողջական արհեստանոցներից մեկն է:

Քաղաքի արհեստանոցներից է 1949 թ. Կաթողիկե եկեղեցուց հյուսիս-արևմուտք բացված, գրեթե ամբողջությամբ ավերված բրուտանոցը: Հայտնաբերված խեցեղեն առարկաների մեջ ուշագրավ են երկու նույնանման դուրգերը (Քալանթարյան 1970, 24): Դուրգերից մեկը ունի 24 սմ հարթակի տրամագիծ և 14,2 սմ բարձրություն: Այն իր հիմնամասում (տրամագիծ՝ 11,4 սմ) ունի 4,4 սմ տրամագծով և 11,5 սմ խորությամբ աստիճանաբար նեղացող մի անցք, որի մեջ սուր ծայրով մտել է առանցքը (նկ. 5(1)): Առանցքով դուրգը միացել է թափանիվին և ոտքով թափանիվը պտտելու արդյունքում պտտվել է նաև դուրգի անիվը: Դվինից գտնված դուրգի անիվների մյուս բեկորները ձեռքով պտտվող անիվների տիպին են պատկանում:

Նույն տարածքից՝ մի փոքր ավելի հարավ, 8–9-րդ դդ. թվագրվող շերտում գտնվել է տուֆից սանդանման ոչ խորը փոսով մի քար, որը, ըստ հետազոտողների, նախատեսված է կավահող մանրացնելու համար: Նույն տարածքում բացված հորի միջից դուրս է բերվել մաքուր վիճակում մանր կավահող: Տարածքում հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ հալված կավե տձև զանգվածի բեկորներ և մոտ 25 սմ տրամագծով կավագունդ (Քալանթարյան 1976, 30):

Քաղաքի խոշոր խեցեգործական արհեստանոցները հայտնաբերվել են միջնաբերդի ու քաղաքի պարիսպների տակ, բնակելի թաղամասերում (Акопян и др. 2008, 186): Այս մեծ արտադրամասերից մեկը պայմանականորեն անվանվում է 7-րդ տեղամաս, որը հետազոտական աշխատանքների է ենթարկվել դեռևս 1939 թվականից: 1983 թվականին տեղում հայտնաբերվել են մեծ քանակությամբ հասարակ և ջնարակապատ խեցեղենի խոտան բեկորներ (խոտանի մեջ չկան հախճապակու և սնդկամանի բեկորներ), եռոտանիներ (նկ. 2(4), գլանաձև կավե ձողեր (նկ. 2(5), նկ. 3(2) և այլն : Տարածքում ավելի վաղ հայտնաբերվել է մի հսկա հոր՝ լցված մաքուր կավահողով (Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 80–81): Բացվել են նաև բավականին վնասված կավե պատերով հսկայական հնոցներ, որոնց մեջ պահպանվել են շուրջ երկու տասնյակ ջնարակապատ անոթներ՝ իրար վրա դասավորված և եռոտանիներով միմյանցից անջատված: Անոթները կառուցվածքով միանման են և միմիանցից տարբերվում են միայն ջնարակի գույներով և նախշերի մոտիվներով: Սա հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Դվինում առկա են եղել խեցեգործական իրարից տարբերվող դպրոցներ, որոնք ունեցել են իրենց յուրահատուկ ձեռագիրը (Акопян и др. 2008, 19):

Քաղաքի պարիսպների տակ գործող խոշոր հնոցների մասին է հիշատակում նաև ակադեմիկոս Առաքելյանը: Դրանցից երկուսը պահպանված են եղել մինչև 1939 թ. քաղաքից հարավ գտնվող Վերին Արտաշատ գյուղի տարածքով անցնող պարսպապատի մի հատվածին հենված: Ունեցել են 3–5 մ տրամագիծ և հավանաբար մոտ նույնքան էլ բարձրություն (Առաքելյան 1958, 216):

Եվս մեկ հնոց էլ 1947 թ. հայտնաբերվել միջնաբերդից բավականին մեծ հեռավորության վրա՝ ներկայիս Բերդիկ գյուղից կես կիլոմետր հարավ: Հնոցը պահ-

պանվել է խիստ քայքայված վիճակում: Այն թվագրվում է 12–13-րդ դարերով (Ղաֆադարյան 1952, 236):

Դվինում խեցեղենի տեղական արտադրությունը փաստող առանձին արտեֆակտներ վերաբերում են ավելի վաղ ժամանակների: Ուշագրավ է դուրգի սկավառակի երկու ստորին հատվածներից մեկը՝ պատրաստված տուֆից, հայտնաբերված Կենտրոնական թաղամասում՝ 7-րդ դ. կաթողիկոսարանից արևելք՝ 5–6-րդ դարերի մշակութային շերտին նախորդող հելլենիստական շերտում (նկ. 4(3): Անտիկ դուրգի անիվի մյուս համեմատաբար ավելի լավ պահպանված ստորին հատվածը հայտնաբերվել է միջնաբերդի հում աղյուսե պատերով մեծ շինության բակի հատվածում՝ ստորին հելլենիստական շերտում (Քոչարյան 1980, 79): Այն պատրաստված է դեղնավուն կավից և ունի բաց վարդագույն փայլեցման հետքեր (նկ. 4(1, 2): Համեմատաբար լավ պահպանված կավե դուրգի սկավառակի ստորին հատվածը ունի 10 սմ պահպանված բարձրություն, հիմքի տրամագիծը 10 սմ է, իրանի հատվածում՝ 8,3 սմ, անցքի տրամագիծը՝ 5,5 սմ:

Դուրգի անիվի մեկ այլ՝ վերին հատվածի բեկոր էլ հայտնաբերվել է Կենտրոնական թաղամասի 7-րդ դարի խճի շերտից (Ղաֆադարյան, Քալանթարյան 2002, 78): Բեկորն ունի պահպանված 19 սմ երկարություն, 10 սմ լայնություն և 5 սմ բարձրություն (նկ. 5(2): Պահպանված հատվածի վրա միմյանցից 12,2 սմ, իսկ եզրից 5 մմ հեռավորությամբ առկա են 4 մմ տրամագծով երկու անցքեր: Եզրի հաստությունը 2 սմ է:

Հետաքրքիր է նաև Դվինի հարևանությամբ գտնվող Այգեստան գյուղի գերեզմանատան տարածքից 1962 թ. գտնված դուրգի սկավառակը, որն իր վրա կրում է զարդանախշեր (Քալանթարյան 1970, 24):

Այսպիսով, կարելի է փաստել, որ Դվինի տարածքում մինչև այժմ հայտնաբերվել են խեցեղենի տեղական արտադրությունը փաստող բազմաթիվ գտածոներ: Հայտնաբերվել են տարբեր պահպանվածության մակարդակների և տարբեր չափերի ու նշանակության արհեստանոցներ քաղաքի բոլոր հատվածներում: Բացի այս արհեստանոցները հայտնաբերվել են նաև արտադրության գործընթացի հետ կապված բազմաթիվ առարկաներ՝ խեցանոթների խոտան բեկորներ, դուրգի անիվներ, ջնարակի հետքերով և առանց այդ հետքերի եռոտանիներ, գլանաձև առարկաներ, կոկիչներ, նախշիչներ, ոսկրե գործիքներ, բարձր որակի կավահողով լցված հորեր, անգորի կուտակումներ և այլն: Այս ամենը փաստում է Դվինի՝ որպես մերձավորարևելյան խեցեգործական խոշոր կենտրոնի դերը, և խոստանում հնագիտական նորանոր բացահայտումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1958 – Առաքելյան Բ. Ն., Քաղաքները և արհեստները Հայաստանում 9–13-րդ դարերում, 1, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1958:

ԲԱԲԱՅԱՆ 1979 – Բաբայան Ֆ. Ս., Խեցեղենի թրծման հնոց Դվինից, Պատմա-բանասիրական հանդես, 1979, 1, 275–280:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1952 – Ղաֆադարյան Կ. Գ., Դվին քաղաքը և նրա պեղումները, 1, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1952:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1982 – Ղաֆադարյան Կ. Գ., Դվին քաղաքը և նրա պեղումները, 2, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1982:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 2002 – Ղաֆադարյան Կ. Գ., Քալանթարյան Ա. Ա., Դվին 2-րդ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2002:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1970 – Քալանթարյան Ա. Ա., Դվինի նյութական մշակույթը 4–8-րդ դդ., Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1970:

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 1976 – Քալանթարյան Ա. Ա., Դվին 1-ին, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1976:

ՔՈՉԱՐՅԱՆ 1980 – Քոչարյան Գ. Գ., Անտիկ շրջանի դուրգի անիվներ Դվինից, Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, 9, 79–82:

АКОПЯН и др 2008 - Акопян Н. Г., Бабаян Ф. С., Жамкочян А. С., Калантарян А. А., Кафадарян К. К., Кочарян Г. Г., Двин 4, Ереван, Издательство «Гитутюн» НАН РА, 2008:

BIRCHLER et al. 2016 – Birchler P., Chamy J., Cottier F., Van der Wielen F., Secrets d'atelier. Céraamique antique, techniques et savoir-faire, Genève, 2016:

Hamazasp Abrahamyan

History Museum of Armenia

habrahamyan679@gmail.com

ARCHAEOLOGICAL EVIDENCES OF POTTER'S CRAFT IN DVIN

Keywords: Dvin, ceramics production, production process, kiln, potter's wheel, tripod

The pottery making culture of Dvin, especially the production process and the pottery- and accompanying archeological findings from Dvin are presented in the article.

In parallel with the Near East political changes of the 9th–13th centuries, in the conditions of the development of crafts and trade, the pottery making culture reached a new level. Unlike other medieval settlements in the region, pottery consists the vast majority of archeological findings in Dvin. They stand out not only for their quantity, but also for their style and patterns, which shows the prevalence and level of development of pottery in medieval Dvin. Pottery and other artifacts related to the production of pottery were found in almost all the excavated parts of the city, which allow to make general conclusions about the production process of this pottery making center in the Near East.

Амазасп Абраамян

Музей истории Армении

habrahamyan679@gmail.com

ОБ АРХЕОЛОГИЧЕСКИХ СВИДЕТЕЛЬСТВАХ ГОНЧАРНОГО РЕМЕСЛА В ДВИНЕ

Ключевые слова: Двин, производство керамики, производственный процесс, печь для обжига, гончарный круг, треножник

Предлагаемый отчет представляет гончарную культуру Двина. процесс производства, гончарная мастерская, найденную на месте, и сопутствующие археологические находки. Параллельно с политическими изменениями на Ближнем Востоке IX–XIII веков, в условиях развития ремесел и торговли гончарная культура вышла на новый уровень. В отличие от других средневековых поселений в этом регионе, подавляющее большинство археологических материалов, найденных в Двине, представляют собой гончарные изделия. Они выделяются не только количеством, а также отличаются стилистическим разнообразием, что свидетельствует о распространенности и уровне развития гончарного искусства в средневековом Двине. В ходе

археологических раскопок гончарная мастерская различных размеров, а также археологические предметы, были обнаружены практически во всех исследованных частях города, что позволяет сделать общие выводы о производственном процессе ближневосточного гончарного центра. Чтобы представить процесс производства гончарных изделий Двина, мы использовали имеющуюся литературу по этой теме, археологические материалы, хранящиеся в Музее истории Армении и полевые дневники.